կատարեցաւ և անանց փառացն արժանացաւ, և եդաւ 'ի վկայարանի Դանիէլի մարգարէին, ուր ընկեցեալն էր 'ի գուբն առիւծուց: Եւ սա գրեալ էր զմեկնութիւնըն սրբոյ Աւետարանին Յօհաննու՝ Մարկաւագն:

Աշոտ երրորդ՝ որդի Սմբատայ Նահատակի՝ իշխեաց ամս ԼԲ. և վասն առաւել բարի վարուց և աշխարհաշինութեան և խաղաղասիրութեան նորա՝ կայսրն Յունաց մեծն Վասիլ և Խալիֆայն Պաղտատու՝ ուրոյն ուրոյն թագ առաքեցին սմա. և յերկուց թագաւորացն պսակեալ ճոխացաւ, և մեծ նաւակատեօք օծաւ Թագաւոր Հայոց. և հինգ ամ ևս 'ի պակաւորութեանն կացեալ՝ յանանց թագաւորութիւնն փոխեցաւ:

Սմբատ արքայ երրորդ՝ որդի Աշոտոյ արքայի՝ քան զհայրն իւր շատ ճոխացաւ. զի էր այր գոռոզ և պատերազմօղ. իշ-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան